



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ Ե Լ Է Ք Օ Ն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Շ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Վ Ո Ւ Մ Է

ՄՇԱԿ

(25-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1897 ԹԻԱԿԱՆԻ

Բ Ա ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Տարեկան գինը՝ 10 ռուբլի, կես տարվանը՝ 6 ռուբլի

Հասցեն. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction «MSCHAK».

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Մի տարի առաջ. Պարիզի ցուցերը Թիֆլիսյի ղեկավար Կրեյնի. Նեմ-ԲիՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Նուրեյնի յոգուտ հայ գաղթականների. Մատենադարանի. Հայոց թատրոն. Նամակ Եւրոպայի. Նամակ Արաբիայի. Նամակ Ալեքսանդրապոլի. Նամակ խմբագրության. Ներքին լուրեր. — ԱՄՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Վերջին տեղեկություններ. Անգլիայի պատասխանատվությունը. Վանի առաջնորդական փոխանորդը. Նամակ Պարսկաստանից. — ԽԱՆԻ. ԼՈՒՐԵՐ. — ՀԵՆՐԻԿ-ԳԻՐԻՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Արեւելեան հարցը.

ՄԻ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Լուսնում տպված մի փոքր թերթիկ, որ կրում է «Perishing Armenia» (հալածված Հայաստան) վերնագիրը, առաջ է բերում անդրկական ներկայ միջնորդության արտաքին դարձերի քարտուղար Կրեյնի ճառը, որ նա արտասանեց համայնքների ժողովում ուղիղ մի տարի սրանից առաջ, փետրվարի 20-ին: Հիշում հասկանում թէ ինչպես կարելի է բացատրել կամ նայել իսկ նուազեցնել հայկական կոտորածների սարսափելի բնաւորությունը (ինչպես այդ անում է Այվան Բարդեղյան): Եւ առեւի բան որ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ

(Գրեց սյրֆեսոր կոմս Լ. Ա. Կամարովսկի)

V

Արեւելեան հարցը լուծել ամենին չէ նշանակում մուսուլմաններին Եւրոպայից արտաքսել կամ բանի կերով նրանց քրիստոնեայ դարձնել: Պէտք է միայն վերջ դնել թիւրքաց անտանելի և երկարատև հարստահարություն, որ նախատինք է ամբողջ քաղաքակրթված աշխարհի համար: Նշմարիտ է և այն, որ մեր առաջ մեծ արդեւներ կան այդ նպատակին հասնելու համար. ինչպէս՝ Թիւրքիայի գոյությունը, նրանից անջատված ազգերի անդադրադադունք և փոխադարձ թշնամությունը ու մեծ պետությունների անվերջանալի խռովումները և քաղաքական շահերի կարծեցեալ հակասակությունը:

Վաղուց ժամանակ է մեծ պետություններին համոզվել, թէ որ և է հմաքով նրանք չեն կարող կենալ ներքինը այն դիպելի մէջ, որ Բ. Գուռն է կոչվում: Թող մեծ պետությունները ձեռք վերցնեն Թիւրքիայի գոյությունը պահպանելուց և նա չառ չուտով ինքն իրան կը լուծվի: Եւրոպական կաթինները իրանց յարաբերությունները Թիւրքիայի հետ դնելով միայն քաղաքական հողի վրա, երբեք չեն կարող համաձայնեցնել միմեանց հետ իրանց ընդարձակ շահերը: Սակայն ամեն բան կը փոխվի. եթէ գործի վրա նայեն բարոյական տեսակետից: Մեծ պետությունները, իբրեւ քրիստոնեայ երկիրներ և բարձր, հանրամարդկային

և է մի ուրիշ անձն համայնքների ժողովում, կարգացել եւ տեղեկություններ այդ անցքերի մասին, որովհետեւ բացի «կապույտ գրքերից», եւ ունեցել եւ ուրիշ թէ հրատարակված և թէ անտիպ նիւթեր իմ առաջ: Եւ այդ բոլորից եւ քաղաք եւ հետեւալ տպագրությունը—բոլոր կոտորածները ունեն ընդհանուր գծեր և տեղի են ունեցել բէֆօրմների մասին խոստովանել տարուց յետոյ միաժամանակ փոքր Ասիայի դաշնազան մասերում: Մեծ մասամբ սկսողները եղել են թիւրքերը և կոտորածներին մասնակցել են թիւրքաց զինուորները. իսկ ամբողջ գործողությունը ցույց է տալիս, որ կոտորածը հետեւանք է կատարեալ կազմակերպության և մաքիմա-տիկական հաշիւների: Կոտորածները մի բանի տեղեկում սկսվել են և վերջացել թմբակահարություններ: Քրիստոնեաներից լիազուրկ են միայն հայերը. ուրիշ քրիստոնեայ ազգերի կենալը ինչպիսի է իսկ սկսված թիւրքերի թիւը անշուշտ է: Կոտորածների հետ միասին առաջ էր ընթանում բունի մահմետականացումը ամենամեծ խտրվածքով: Կ. Պոլսի զեհուպանները իրանց հիւպատոսների տեղեկությունները հիման վրա ցույց են տալիս, որ մահմետականացումը հայերի թիւը 25,000 է: Եւ կարծում եմ, որ այս թիւը ոչ թէ առաւելագոյն է, այլ նուազագոյնը, ու

կուլտուրայի ներկայացուցիչներ, պէտք չէ արդեօք որ, վերջապէս, մի օր զգան այդ պարտաւորությունը, որ պահանջում է, մեր ամբողջ քաղաքակրթության ապագայի շահերի համար, որքան կարելի է չուտ, խաղաղ և արդար կերպով լուծել արեւելեան հարցը:

Դրա համար մեծ պետությունները պէտք է կանգնեն միջազգային իրաւունքի հողի վրա, որը, ընդունելով բարոյական սկզբունքների դրոճագրությունը ազգերի փոխադարձ յարաբերությունների մէջ, միայն և եթ կարող է համաձայնեցնել Եւրոպայի խաղաղությունը և ընդհանուր բարեքի պահանջները նրա ամեն մի անդամի մասնաւոր օգտի և ազատության հետ: Այդ պատճառով, մեծ պետությունները, եթէ միայն լուրջ կերպով կամենում են լուծել արեւելեան հարցը, պէտք է փոխադարձաբար պարտաւորվեն ի նկատի չունենալ Թիւրքիայի վերաբերմամբ որ և է նուազումներ, առևտրական կամ ուրիշ բացառիկ սեփական օգուտներ: Այն շահախնդրություն մի այդպիսի արձանագրություն հարաբերություններ կը տար ոչ միայն յետ մեծ Թիւրքիային, այլ և նրա հպատակ երկիրներին մէջ կարգ մտցնել:

Ամենից առաջ խնդիրը Բալկանեան թերակղզու մասին է: Այդտեղ բնակվող ցեղերը անբարոյականացած են թիւրքական բազմազարեան սարկություն պատճառով. իրանց պարզեւած ազատությունը նրանք գործ են դնում փոխադարձ խռովումների և մրցունքների վրա, և ոչ թէ ներքին խաղաղությունը ու բարեկեցությունը ամբողջութեամբ վրա, ուստի նրանց մէջ բարեկարգություն և ազատություն հաստատելու համար պէտք կայ Եւրոպայի օգնություն, բայց ոչ այն Եւրոպայի, որ ղեկավարվում է շահագրգռական թա-

րովհետեւ շատ տեղերում հիւպատոսարաններ չը կան: Յետոյ պէտք է աչքի առաջ ունենալ այն երկրները, որ տեղի ունեցան, իբրեւ հետեւանքներ: Ամբողջ գաւառներ ամայացել են, ամբողջ գիւղեր կործանվել. հազարաւոր մարդիկ թափառում են ցուրտ լեռներում՝ անտուն, անփող, առանց հազուադէպ, կերակրի, որոնց համար ա մեն մի պենսիոն այն տասնեակ հազարներից, որ կուղարկւել, կը տայ իր օգուտը: Եւ իմ խօսքերը արտասանում եմ կշռած և միայն կրկնում եմ առեւի հեղինակաւոր անձերի ասածները. բայց յայտնում եմ, որ ներկայ պատմությունը ամենաարագակիւն է իմ կարգացածներից: Համայնքների ժողովի փետրվարի 20-ի նիստը իրաւայն ընդունեց հետեւեալ ձևակերպությունը, թէ նա յայտնում է չոր խորին համակրությունը Ասիական Թիւրքիայի քրիստոնեայ ազգաբնակչությանը նրա անընդունելի առիթով:

Այն օրից մինչև այսօր անցել է ուղիղ մի տարի. կոտորված հայերի թիւը արդէն հասնւ 150 հազարի: Բայց ինչ արեւը կըլըծն, և նրա հետ միասին պաշտօնական Անգլիան յօդուտ համակրություն արժանի քրիստոնեայ հայերին: — Ոչինչ:

ՊԱՐԻԶԻ ՅՈՅՅԵՐԸ ԹԻՒՐԿԻԱՅԻ ԴԵՄ

«Русскія Вѣдомости» լրագրի մէջ Պարիզից գրած մի հետաքրքիր թղթակցություն է տպված: Հերակայել չէք կարող, առում է թղթակցիցը, թէ մինչև ևս ուստիստան արեւելեան հարցը յուզում է արօր պարիզցիներին, նրանց հետ միասին և ամբողջ Ֆրանսիան: Այդ հարցը կլանել է այժմ ամբողջ ուշադրությունը և ամեն մի քաղաքում զգացվում է նրա ներկայությունը: Այնուամենայնիվ, և ահա ամեն կողմ զանազան գոյնի աֆիշներ, որոնք հրաւիրում են հասարակությունը մասնակցելու կրեւական և հայկական հարցերի առիթով կազմվող կոնֆերանսներին և միտինգներին, կիսակներին վրա կախ տուած

ղաքական նկատուններով, այլ այն Եւրոպայի, որ ղեկավարվում է բարոյական սկզբունքներով ու իդէալներով: Նա պէտք է աշխատի, որ արդէն գոյություն ունեցող բալկանեան պետությունները հասնեն իրանց բնական սահմաններին, ազգությունների ծաւալի և արգարություն պահանջների համաձայն:

VI

Բալկանեան թերակղզու բարեկարգությունից յետոյ հերթը պէտք է գալ քրիստոնեաների ազատության Ասիայում: Թիւրքիան, իբրեւ ինքնուրույն պետություն, չէ կարող երկար չարուհանակ իր ողորմելի գոյությունը ոչ Ասիայում, ոչ Աֆրիկայում: Վերջերս մամուլը խօսեց այն մասին, թէ Ռուսաստանին տրվում է Հայաստանը, Ֆրանսիային—Սիրիան, իսկ Անգլիային—Նեքիպոսը (վերջնականապէս): Կարելի է, որ այդ երկիրները այս կամ այն մեծ պետության հովանաւորության տակ դրվեն. հպատակություն այդ ձեւը, ապահովացնելով նրանց համար արտաքին խաղաղությունը, միջոց կը տայ նրանց օրոշ ներքին ինքնավարություն և անկախություն ունենալ, իսկ նրանց հովանաւորող պետությունը ստիպված չի լինի մասնի նրանց ներքին կենալը. բոլոր մասնաւորություններին մէջ, ինչպէս այդ պէտք է լինել, եթէ երկիրը միացված լինէր: Բայց ժամանակով, այդ երկիրների կուլտուրական զարգացման համաձայն, նրանք էլ կը կոչվեն վարելու այն սեփական ազգային կենալը, որով արդէն սկսել են այսինքն իրանց եւրոպական քրիստոնեայ—հղբայրները, Թիւրքիայի յաջորդական բայցաման պատճառով: Եւրոպայի համար Բ. Գրան ասիական երկիրները ամենամեծ արժէք ունեն Պալեստինը: Բոլոր այն տեղերը, որոնք նուիրագործված են

ժողովրդային, որտեղ չեն խնայում ոչ սուլթանին, ոչ Հանոսոյին, ոչ էլ «Եւրոպական պետությունների կոնգրեսներ»: Լսվում են չիոյ կորչաներ թիւրքերը, կեցցէ Յունաստանի աղաղակները: Գնում էք պատգամաւորների փողովը, մի որ և է լրագրի խմբագրություն, մի որ և է սրճարան, կլուբ, առաջին բանը որ լսում էք, հայերի և կրեւացիների մասին վիճաբանություններ են:

«Մէկ ու կէս ամիս առաջ արեւելեան հարցով այստեղ զբաղվում էին միայն պարլամենտում և խմբագրությունների մէջ. հասարակությունը բաւական անտարբեր էր վերաբերվում: Նա ի հարկէ կարգում և լսում էր թիւրքաց գաղտնութիւնների մասին փոքր-Ասիայում և Կ. Պոլսում, բայց նրան լաւ ծանօթ չէր այդ գաղտնութիւնների մէջ թիւրքաց կառավարության խաղաղած գերը, ուստի և նա իր օրտին շատ մօտ չէր ընդունում: Իսկ լուրջ կերպով ժողովուրդը հետաքրքրվեց թիւրքաց գործերով այն օրից, երբ Բէրլին իր նշանաւոր յօդուածներով սուլթանի քաղաքականութեան մասին բացատրեց թիւրքերի և թիւրքաց զինուորների ձեռքով կատարված կոտորածների ներքին կողմը, երբ Լավիա շատ հանդարտ, բայց խիստ յօդուածներով ցույց տուեց Հանոսոյին, որ նոյն իսկ եւրոպական քաղաքականութեան համար աննպաստ է արդէն չափազանց զիջող քաղաքականությունը թիւրքաց կառավարության վերաբերմամբ, երբ նոր լոյս եկած ախպէթիկ վանտալ, Անատոլիայում Բալկան, Լավիա, Գաստուն Դէլանի հետ միասին պատմեց հրապարակական դատախոսութեան մէջ Սասունում, Գիարբէքիում և Կ. Պոլսում թիւրքերի կատարած բռնությունների սարսափելի պատմությունը: Բայց վճռական հարուածը տուեց Կրեւելի զէպը, որ զարթեցրեց պարիզցիների մէջ նրանց անանական համակրությունը զէպի յոյները: Այդ օրից համակրությունը զէպի յոյները և հայերը սկսվում են արտայայտ-

Պրիզի երկրաւոր բնակչութեամբ, պէտք է հրատարակվեն իբրեւ բոլոր քրիստոնեաների ընդհանուր ժողովուրդները: Պալեստինին կը տրվի ներքին ինքնավարություն, բայց նրա վրա կը հակի մի առանձին միջազգային իշխանութիւն: Բոլոր քրիստոնեաները նրա հողի վրա պիտի վայելեն հաւասարություն և ազատ դաւանություն: Իրաւունքը լիզեցեցական ժամանացութիւնները կատարելիս՝ սուրբ տեղերում և նուիրական օրերում պիտի հաստատվի ընդհանուր խիստ կարգապահութիւն և հերթաշաւութիւն: Վաղուց ժամանակ է արտաքսել այդ տեղից մահմետական պահակազօրքը: Պալեստինում թող չը պիտի տրվեն ոչ պատերազմ, ոչ ներքին խռովություններ: Յատկապէս Երուսաղէմը ապագայում լուրջալի է արգարացնելու իր հրէական անուշը— ինչպէս որ թիւրքան քաղաքն ու ինչպէս որ պիտի տրվեն նրա հողը: Նա պէտք է լինի գլխաւորապէս աղօթքի և հանգստութեան տեղ բոլոր այն անձանց համար, որոնք որոնում են փրկություն աշխարհային ցավերից և հայտնություն Աստուծու հետ: Ինչ վերաբերում է մահմետականներին և հրէաներին, նրանք կարող են անդրել Պալեստինում, բայց չունենալ ոչ մի անչարժ սեփականություն, բացի տաճարներից և աղօթարաններից:

Վերջին ցաւայի զէպերը հրաւիրեցին Եւրոպայի ուշադրությունը Հայաստանի վրա: Մինչև այսօր Սան-Ստեֆանոյի (յօդուած 16) և Բերլինի (յօդուած 61) դաշնագրերի մէջ եղած կարգադրությունները այդ երկրի մասին մեղաւ տաւ են մնում: Հայկական նահանգների տեղական կարեւորներից ըլլալով բարեկարգությունները և

վել հրապարակական բուռն ցուցանիշով և աղիտացիաներով, որոնց պոետն է կանգնած երիտասարդութիւնը»

ԻՆՔՆԱՎԱՐ ԿՐԻՏԷ

Յայնքը իջեցրին պատերազմական դրօշակը, ապառաժները վայր գրեցին զէնքը, եւրօպական նաւերը զինադադար յայտարարեցին, թիւրքաց կոտորված նաւերը հեռացան ապստամբ կղզու ամբիւրջը, և Կ. Պոլսում ու Ալեքսանդրիայում յանձնվեցին զենսպանական յայտագրերը:

Հետեւեալք: Հետեւեալքը կրեալին ինքնավարութիւնն է, վարչական կառարեալ ինքնավարութիւն, որ այլ ևս ոչինչ կախում չը պիտի ունենայ թիւրքաց ամեն ինչ քաջայող, ամեն բան մեղսող իշխանութիւնից և միայն, քաղաքական վայելչութիւնն պահպանած լինելու համար, պիտի ընդունէ սովորման գերիշխանութիւնը:

Այսպէս ուրիշն, կրեալն, համեմատելով թիւրքաց կոտորածներին միւս գոհների հետ, աւելի քաղաքացի էր քաղաքական լիբերալն, որ այս անգամ ցոյց տուեց համեմատաբար աւելի վճռողականութիւն, ստիպված եղաւ, աւելի մեծ բարդութիւններ չը ստեղծելու համար, ակամօղ զինել անհրկիւզ կղզու քրիստոնեայ ազգաբնակչութեան քաղաքներին, և զիջել նրան այն ինքնավարութիւնը, որ անխուսափելի կերպով պէտք է տանի այդ կղզին զէպի կառարեալ անկախութիւն, և կամ, եթէ լիբերալն այդ չի արդելի, զէպի կառարեալ միացումն Յունաստանի հետ: Դա արդէն միայն մի քանի տարւոյ զործ է, և ոչ աւելի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՒՔԻՆԵՐ ԹՅՈՂՈՒՆ ՀԱՅ ԳԱՂՔԱԿԱՆՆԵՐԻ
(Պաշտօնական հայելւ)

Յեղուտ թիւրքացիք Ռուսաստանի սահմանները փախած հայելի հետեւալ նուիրատուութիւններն են մտել Կովկասեան գլխաւոր իշխանութեան կարգադրութեան տակ մինչև 1897 թ. ակտի փետրվարի 15-ը:

- I Թիֆլիսի նահանգապետի միջոցով.
- 1) Կոնցերտից գոյացած և իրաւագիտութեան կանգնողութիւն Գրիգոր Նովիկովի միջոցով ներկայացված—400 ր.:
 - 2) Զանազան անձինքների նուէրներ, որ ներկայացրել է երգուհեալ հաստատմամբ լեւոնգուլ—300 ր.:

Բէֆօրմները, որոնց մասին խոսում են այդ դաշնագրերը, չեն իրագործվել: Եւրանց ապահովութիւնը քրիզների և չեքիզներին զէպս երաշխաւորված չէ. այդ բաւական չէ. Բ. Գուրու Էպարտաւորվել է (Բերլինի դաշնագրով) հաղորդել պարբերաբար տեղեկութիւններ իր ձեռք առած միջոցների մասին մեծ պետութիւններին, որոնք յանձն են առել հսկել նրանց գործադրութեան վրայ: Հայելի խմբովին ջարդը Սասունում և ուրիշ տեղերում զրգոնցին լիբերալային ընդհանուր զայրույթը և Բերլինի դաշնագրերը ստորագրող վեց մեծ պետութիւններից երեքը, Ռուսաստանը, Անգլիան և Ֆրանսիան մի քանի քայլեր արին ի նպատակ այդ դժբաղդ ցնդի: Բայց, ըստ երևոյթի, այդ հարցը նորից քննարկում է և զոհ է բերվում քաղաքական հայելուներին ու կրքերին: Այդ նպատակով պարբերական մամուլը առաջ է քշում Անգլիայի և Ռուսաստանի մէջ եղած հակառակութիւնը, այսինքն այն պետութիւնների, որոնք բարոյապէս և իրաւագիտապէս ամենից շատ պարտաւոր են օգնել հայելին: Խոսում է «մեծ Հայաստանի» անիրականանալի ցնորքի մասին, մասնացոյց է անում հայելի գործած յեղափոխական շահատակութիւնների և անկարգութիւնների մասին: Եւ այնչա՛ Այդ բոլորը միայն անխուսափելի հետեւեալ է այն բանի, որ պետութիւնները այդտեղ ինչպէս և արեւելեան հարցի ուրիշ մասերում, կամ ամեն բան թողնում են անշարժ մնալու և փոխելու, կամ ամեն բան իրանց սեփական քաղաքական շահերի չափով են չափում: Այդտեղից առաջ են գալիս երկպառակութիւններ, բռնութիւններ և ընդհանուր զգոհութիւն... Իսկ Թիւրքիային հէնց այդ էլ հարկաւոր է:

Յայտնի ամբրիկական քարոզիչ Գրէնի կարծիքով.

- 3) Թիֆլիսի վաճառական Մալաթի խիթարեանի նուիրած—100 ր.:
- 4) Զանազան անձինքների նուէրներ, որ ներկայացրել է «Ноб. Одо3р.» լրագրի գրասենական—33 ր.:
- 5) Միջոցների երկաթուղու գոյրոյի ծառայողների նուիրած—42 ր.:
- 6) Ա. Ս. Սերբերի միջոցով Ալեքսանդրիայում զանազան անձինքների նուէրած 91 ր. 81 ր.:
- 7) Զանազան անձինքների նուէրներ, ներկայացված «Մալի» խմբագրութիւնից—2887 ր. 70 կոպէկ:
- 8) Զանազան անձինքների նուէրներ, ներկայացված «Ноб. Одо3р.» լրագրի խմբագրութիւնից—82 ր.:

II Կոնստանտնուպոլի շրջանի կառավարչի միջոցով Եկատերինոպոլ քաղաքում զանազան անձինքների նուիրած—2516 ր. 92 ր.:

III Թիւրքիայի շրջանի կառավարչի միջոցով Կադիկալկալաքում յունկարի 28-ին տրված ներկայացումից գոյացած 403 ր. 50 ր. 10-րից հանելով ճանապարհածախը՝ մնում է 401 ր. 41 ր.:

IV Մոսկովայի նահանգապետի միջոցով Ժառանգական աղուական Ի. Ն. Կոնյինի նուիրած 150 ր. և գիւղացի Ի. Ա. Վասիլովի նուիրած՝ 5 ր.:

Ընդամենը—7009 ր. 84 ր.:

Բացի դրանից Կովկասեան գլխաւոր վարչութիւնից անկախ, յերանի նահանգապետը ստացել է. 1) Աստրախանի նահանգապետից—400 ր.:- 2) Ներսիս քաղաքի բնակիչներից—290 ր.:
- 3) Ալեքսանդրօպոլում բարեգործական նպատակով արված պարահանգից—656 ր. 78 ր. և ընդամենը 1346 ր. 78 ր.:

Վերոյիշեալ դրամական նուէրներից (ընդամենը 8356 ր. 62 կոպէկ)՝ համաձայն նահանգապետների միջնորդութեան և ի նկատի ունենալով այն կարիքը, որ զանազան տեղերում ունեն թիւրքացապետի հայ գաղթականները, համաձայն կարգադրութեան կառավարչապետի պ. պաշտօնակատարի, տրված է.

- 1) Թիֆլիսի նահանգապետին—ամենից աւելի կարօտ գաղթականներին շոր մատակարարելու—500 ր.:
- 2) Թիֆլիսի ոստիկանապետին—յանձնելու տիկին Յովնանանին՝ գաղթականներին ձրի ձաշ մատակարարելու համար—300 ր.:
- 3) Ներսիսի նահանգապետին, յերանի նահանգում գտնված ամենակարօտ հայ գաղթականներին օգնելու համար, Կովկասեան գլխաւոր

վարչութեան կարգադրութեան յանձնված գումարներից—2000 ր. պ. նահանգապետի մօտ ստացված գումարներից—1346 ր. 78 ր. և ուրեմն ընդամենը յերանի նահանգապետին տրված է—3346 ր. 78 ր.:

4) Կարսի նահանգի զինուորական նահանգապետին նոյն նահանգում գտնվող ամենակարօտ հայ-գաղթականներին օգնելու համար տրված է 2000 ր.:

5) Յիւնիսի նպատակների ուղարկելու պատի ծախս 12 ր. 14 ր. Ընդամենը 6158 ր. 92 ր.:

Կովկասեան գլխաւոր իշխանութեան կարգադրութեան տակ մնացել է—2197 ր. 70 ր.:

Բացի դրանից, Կովկասեան գլխաւոր իշխանութիւնը ստացել է հետեւեալ նւիրները.

- 1) Կոնստանտնուպոլի կառավարչից երկու հալ մանուֆակտուրի ապրանք 9 պուլ գանդութեամբ, որ նուիրել են Եկատերինոպոլում զանազան անձինքներին և որ ներկայացրել է հայոց հոգեբանականութիւնը: Մոտեցելուց յետոյ երևաց, որ այդ հակերում գտնվում են 10 վերամակներ, 28 տաք շաւեր, երկու կտոր ֆլանել 373/4 արշին երկարութեամբ, 19 կտոր բոսաղէյ 503 արշին երկարութեամբ, 2 կտոր կրեմոն 1331/2 արշին և մի կտոր կոպիտ ֆլանել 191/2 արշին երկարութեամբ: Այդ բոլոր ապրանքը զրկւած է Երևանի նահանգապետի, Կարսի նահանգապետի և Գորիսային նահանգապետի օգնականի կարգադրութեան տակ:

2) Նոր-Նախիջևան քաղաքի հայուհիներից Բուսուլում գտնվող Սուրաշիվի գրասենականի միջոցով ստացված է 15 հալ և երեք արկղ (ընդամենը 18 հալ) 56 պուլ և 10 ֆունտ ծանրութեամբ, որոնց մէջ կալին հագնելու զգեստներ և կաշուէ ոտնամաններ: Այդ բոլոր ապրանքն ուղարկված է յերանի նահանգապետի կարգադրութեան:

Պ. պ. նահանգապետներին հայ գաղթականներին օգնելու նպատակներով ուղարկված գումարները և ապրանքները, համաձայն կառավարչապետի պ. օգնականի զենքերով Ամիլիալարիի հրամանին, կարօտեալներին պիտի բաժանէ ոստիկանութիւնը՝ տեղացիներից երկու կամ աւելի հոգու մասնակցութեամբ, ըստ հայեցողութեան նահանգապետի: Օգնութիւնը բաժանելիս՝ պիտի կազմվեն հարկ եղած արձանագրութիւնները, ստորագրութեամբ և յիշեալ տեղացիների, պիտի ներկայացվի Կովկասեան գլխաւոր իշխանութեանը հարկ եղած հաշիւը:

VII

Մենք, որքան կարելի է, ամփոփ կերպով ընդհանրեցրել ենք մասերը այն մեծ, բարդ խնդրի, որ կաշվում է արեւելեան հարցը և, իբրեւ վերջաբան, գալիս ենք հետեւեալ ընդհանուր եզրակացութիւններին.

1) Թիւրքիայի, իբրեւ քրիստոնեայ ազգերի մէջ մի անկախ պետութեան գոյութիւնը, վաղուց անհնարին է դարձել: Եթէ այդ գոյութիւնը զեռաջ է գալիս, այդ միայն մասամբ նրա ենթակա զրկւած զիջումատիական բարեկամների, այսինքն մեծ պետութիւններից ցոյց տուած պաշտպանութեան և մասամբ նրանց հակառակութեան ու թշնամութեան շնորհիւ:

2) Մեծ պետութիւնները պարտաւոր են, իբրեւ քրիստոնեայ պետութիւններ և մեր ժամանակի մեծ, հանրամարդկային կուլտուրայի առաջ տանողներ, աշխատել լուծել վերջապէս Թիւրքիայի ժառանգութեան խնդիրը: Գրանցի է կախված զլիւսաւորապէս նրանց իրաքանչիւրի ներքին բարեկեցութիւնը և ապագայ բարգաւաճումը, ինչպէս և ընդհանուր խաղաղութեան հաստատութիւնը երկրի մէջ:

3) Այդ գործի լուծման համար կարինեաների առաջ երկու ճանապարհ կայ: Քաղաքականութեան հին, աւանդական ճանապարհը, զա կապաւորում է նրանում, որ իւրաքանչիւրը առաջ է քշելու և ճանաչում է միայն իր առանձին շահերը, բացառելով մի և նոյն ժամանակ այդ շահերը կառավարական տեսակէտով, կամ այն կուսակցութեան տեսակէտով, որի ձեռքումն է գտնվում

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Կընդ օրը Լուսնի թիւիւն, 1896

Պ. Շանթին աջողվում են լիբիկական զեղումներ: Սէր, բնութիւն, գեղեցկութիւն նկարագրել,—հա՛ն նրա ժամը: Ինչպէս թիւրքահայ համարեա բոլոր գրողները, հա՛ն երգում է. երգում է թէ ստանաւորի թէ պրօպայի մէջ: Երգելու շնորհն ունի նա. լեզուի հարստութիւնը, գոյների խտութիւնը, վառ, նոյն իսկ չափազանց վառ, համարեա էրօտիական զգայնութիւնը մի առատ հոսանք են կաղմում նրա գրութեաններին մէջ, մի հոսանք, որ շատ տեղեւոր բառերի չեղջայտակար է կաղմում: Պարզ, հասարակ լեզուն պ. Շանթից հեռու է փոխում. նոյն իսկ առօրեայ մի մանր հանգամանք նկարագրելիս՝ նա երգելու ձևին է հետեւում:

Բայց ինչ է երգում պ. Շանթ: Թողնենք նրա ստանաւորները, որոնց մէջ, նկատենք անցողակի, լիբիկական արժանաւորութիւններ շատ կան—Ահա նրա «Երազ օրերը»: 169 ութածայ երեսներից կաղմված մի գրքոյկ է դա, սկզբից մինչև վերջը մի սիրային պատմութիւն: Մի զարդանալի աշակերտ ամառը հանդիպում է Գիւրջանում մի օրիորդի և սիրահարվում է նրա վրա՝ սիրահարութեան բոլոր կանոններով: Պատմութիւնը պարզ է, չը կան կնիքներ, չը կայ ինտրիգա. ամեն ինչ յարմարված է այնպէս, որ տղան ու աղջիկը չլիւնեն միմեանց հետ, խօսեն, միմեանց փորձեն, միմեանց յանդիմանեն, զղջան, ուրիշների նախանշը զրգոնեն և ապա միմեանց զիրկն ընկնեն—Չենք ուղում երկարացնել մեր նկատողութիւնը և մանրամասն պատմել սիրային այդ արկածը: Պ. Շանթ մի բան միայն զիտէ—«է՛ր և մի երգ է նրան յայտնի—սիրային երգ: Բնութեան նկարագրիներին մէջ նա ամեն ինչ դնում է այդ բառի—«է՛ր»-շուրջը: Գիտէ նա, որ ծղրիլը անպատճառ Եւրոպայում էր կը ըլլարէ կամ օղը մարդ էր ու յետաք աղջկան մը առաջին համբոյրին պէս: Այսպէս նկարագրողը զարդանալի աշակերտ է, որ նոր է եկել Գիւրջան: Այդ աշակերտը սկզբում արդէն յայտնում է իր մասին հետեւեալը. «սիրային բոլոր պատրաստականութեան հակառակ, հոգիս բոսանալով զեղման հակառակ, սիրելու անհոսն պահանջիս հակառակ» միշտ նոյն անդույզ անապատի արմաւենին էին: Այնուհետեւ էլ մինչև վերջը պատմին սիրով տուրքով, այրելով մի միմեանքի բո՛ւժ է: Բայց ահա նա հանում է իր նպատակին: Սեւանի կղզում, մի մատուռի մէջ տեղի է ունե-

Վերջ

նում այսպիսի տեսարան, «Ամուր ցնցում մը անցաւ մարմնէս, սիրտս կարծես ակնթարթ մը զարնէի դադրեցաւ, ուժգին շարժումով մը ձեռքերս աղատեցի ու իր կրծքին գալարեցայ: Նախ դիմադրելու պէս բան մը ըրաւ: Ետքը կամաց մը կրկնեցաւ մատուռի դրան, ու իր թևերու բոլոր առաձգականութեամբ դէմքս իր այտին վրա սեղմեցաւ: Այնուհետև, ի հարկէ, սիրահարական աւելի անգուսպ տենդեր: Տասն օր է անցնում: Օրիորդը պիտի գնայ ամբարանօցից: Հրաժեշտի ժամանակն էլ մի շարք տեսարաններ: Մէջտեղ են բերվում փոխադարձ խոստովանելու միասին ապրելու, հայրենիքում գործելու մասին: Օրիորդը չի սովորական յանկարծ շարժումով նետվեցաւ բազկաթոռին մէջ ու ձեռքերովը դէմքը ծածկեց: Ես վայրկեան մը կեցած տեղէս դիտեցի, ետքը յուշիկ դացի բուլբուլ, նստեցայ նոյն բազկաթոռին մէջ ու ձեռքերը երեսն ետ առի: Նայեցաւ երեսուն վրէպ փաթիլովեցաւ ու սկսաւ լալ: Բայց ես չէի կրնար լալ: Եւ ալ խօսիլ: Ինչ խօսէի: Խմբագրողներու փոխարէն անոր արցունքները այտերէս վար կը կաթկէին, իր թաց այտերը կը սառնէին իր թոնձրեւորում վրա: Միւս օրը օրիորդը իր մօր և եղբոր հետ կառք նստած՝ գնում է: Սիրահարված երիտասարդը ձիով նրանց ճանապարհ է դնում: Եւ երբ նա պիտի յետ դառնար, տեղի է ունենում մի այսպիսի տեսարան: Կառքից իջնում են օրիորդը և նրա եղբայրը: «Պարոն կարապետի (նրբայր) հետ համարակցեցանք, բռնեցի օրիորդի ձեռքը ու չը գիտէի ինչ ընեմ, համարելու կը վարանէի: Եղբայրը հարկադրում է որ նա համարէ իր քրոջը, առեւթով թէ օրիորդը նրա քոյրն է: Եւ երբ օրիորդը համարակցեց յետոյ կառք է նստում, սկսում է լաց լինել, իսկ նրա մայրը սկսում է նրան յանդիմանել, ասելով որ այդքան փափուկ լինել չէ կարելի:

—Վերջը, կը հարցնէ ընթերցողը: Ահա և վերջը: Միևնույն րոպէս գնում է իր դպրոցը: Մի քանի ժամանակից յետոյ նամակ է ստանում օրիորդի եղբորից: Յայտնի է դառնում, որ այդ եղբայրը դիտել է իր քոյրը մի օտար երիտասարդի գլխին երբ ընկնում: «Բարեկամս, գրում է նա, ես չափ կանուխ նկատեցի ձեռք ու քրոջս մէջ եղած յարաբերութիւնը: Գուցէ դարմանաք թէ ինչու չարեցեցի: Նախ իրաւունք չունէի ձեռք դնելու ձեր խոնարհութեանը: Երկրորդ՝ չէի կրնար... Ծառ լաւ գիտէի որ ոչ գուշ, ոչ ալ քոյրս սահմանէ դուրս պիտի ելնէի: Երկուքդ ալ դեռ չափ անփութ էք, չափ ինքնակամ, չափ մաքուր ու միասնոր: Ձեր յարաբերութիւնը չափ ընկալան էր ու անխուսափելի: Իսկ գալով ինձի մասնաւորապէս՝ ձեր այդ կապէն դժգոհութիւն մը չունենալէս դատ՝ դեռ չիտակեցի ձեզ մէջ հարաբերութիւնը: Ետքը ձեռքերդ քրտնալցեցի, հոս ու հոն սղաղակեցի: Գարկէն: Ամառը որքան որ դուրս եկայի, դուք ու քոյրս, այդ ձեր իրաւունքն էր ու խելացին:

Ներակայում էք աւելի զոգուելի ցինիդա—կարողանում էք հաշտուիլ այն մարի հետ, թէ այսպիսի եղբայր է լինում:—Նա արգելում է իր քրոջ և այդ դպրոցականի ամուսնութիւնը: Քոյրը նոյն իսկ մի նամակ չէ գրում իր սիրած և իրաւաստիքին և կատարում է իր եղբոր հրամանը—մոռնում է իր համբոյրները: Իսկ դպրոցականը: Անցածը անցաւ, գրում է նա և այդ խօսքերով էլ վերջ է դնում իր պատմութեան:

Ահա Ներադ օրերը: Ինչնեքին է որ մի զգուշացնում էր համարում էր մի աղջկան, ինչ պիտի մենք սովորենք այն ցինիական վերջաբանից, որ այդ սէրը անուսնում է լոկ դուրսնալիս: Միայն այն, որ կարելի է ամեն բանից պատմութիւն չինել, կարելի է կեանքի նոյն իսկ ամեն նախադասել երեւոյթները երգել իբրև շերտ օրերը: Գուրս եկաւ որ մենք սէր չէինք տեսնում մեր առաջ, այլ լոկ դուրսնալիս, էլ ինչ կարելի կար ծղրղիւններն էլ սիրելի երգել տալ: Դրադէ հանել, երկինք ու երկիր խառնել միմեանց և բառեր, միայն բառեր կուտակել յանուն ինչ որ բարձր զգացմունքի, յանուն սրտի, յանուն գաղափարի:

Եւ այդ երկուսը—այլիկ ու աղայ, երկուսն էլ միմեանց արժեն—անուանում են իրեցական: Որպիսի դառն հեղուկութիւն, որպիսի աղճատումն խօսքերի ու մտքերի: 10—20 տարի առաջ հայ վկայագրողը երկու սիրահարներին սիրոյ զոհ էր դարձնում: Տեղերը փոխվեցան, այժմ այլ ևս

զոհ չէ հարկաւոր, այժմ կարելի է համարել, որ ամբողջ բնութեան հարստանալը զգացմունքը նկարագրելու համար և ապա անցնել, դժուար անցաւ... Այս է մանրացած, ողորմելի սերունդի իրեցալը: այս է այն պարտաճանաչութիւնը, հոգեկան քաջութիւնը, որ պիտի կրթէ երիտասարդութիւնը: Վաղը, ի հարկէ, մի ուրիշ ամառնոց, մի ուրիշ ծաղրանկար Ջուլիէտ,—և պատրաստ է շարժվել: Ինչ կայ: Մենք գիտենք շատ բաներ, մենք մեր ողորմելի, գծուած հոգին միշտ կարող ենք մեծամեծ արարքների ընդունակ համարել: Մէր, անաղիս իմաստ, երբ հերոսացնում է մարդկանց, դարձնում է նրանց զոհ, հասկացողութիւն: Բայց տեսէք այդ բանը: Գիւրգանի ձորում և դուք երես կը դարձնէք այդ չինձու, ողորմելի զգայնականութիւնից, որի համար դեռ երգեր էլ են հիւսվում... Ափսոս այնքան բառեր, ափսոս այնքան նկարագրութիւններ:

Լ.

Նոր ստացված գրքեր. 1) «Կենդանիների բնադրն ու հասկացողութիւնը»—կազմեցին Ա. Չիլինկարեան և Տ. Բաշմաճեան, Ալեքսանդրօպոլ, 1897, գինը 8 կոպէկ: 2) «Կախարդ»—Լիլիա Օրտիզոն, թարգմ. Յովհ. Մեղիկեան, Պետերբուրգ, 1896, գինը 15 կոպէկ: 3) «Հետաքրքիրները նախնական դաստիարակչությանը» Զ. Դեմեդով, Յովհաննէս, Վիեննա, 1897, գինը 4 ֆրանկ: 4) «Сборникъ свѣдѣній по культурѣ дѣльныхъ растений на Кавказѣ. Выпускъ III.»

ՀԱՅՈՑ ԹԱՍՐՈՆ

Հայոց դերասանական խումբը հինգշաբթի, փետրվարի 20-ին, վարդապետ Կոնյալի օրը, արժեք իր վերջին ներկայացումը. խաղացին «Արշակ»-ը, ողբերգութիւնը և «Փառաբանի մօտ» վոլորվելը: Ներկայացումը գրաւել էր բաւական մեծ բազմութիւն՝ գուցէ վարդապետ Կոնյալի դուրսագրութեան պատճառով: Սակայն ցաւելով պէտք է ասենք, որ ողբերգութիւնը շատ անշուք անցաւ: Գառն թէ «Արշակ»-ը էր, այլ նրա ստուգը: Մեր պատմական ողբերգութիւնները, պէտք է խոստովանեմ, համարեա բոլորն էլ անաշուղ դուրսաձններ են: Նրանց միջոց ինչ փայլ են տալիս բնութիւնը վրա եղած մարդկանց բազմութիւնը, բնութիւնը չեղելով, լաւ գրվելը չեղել հագուստները: Սակայն այդ օրը բնութիւնը երևացին մի չորս դերասաններ և չորս հատ էլ նախադասներ՝ անշուք և անզոր: Երբեք հագուստներով: Երբեք էր անուսնում: Միթէ չէր կարելի ուշադրութիւն դարձնել գոնէ գրքի վրա. պարտից իշխանների և հայ նախադասների գլուխները նման էին սափրիչի խաւով: Ի ցոյց դրված «մարդկանց» գլուխներին: Բացի դրանից, չը գիտեմ ինչու դուրս էր հանված պիեսայից առաջին տեսարանը, վաճառ Մամիկոնեանի մասը, որը շատ խորը ազդեցություն է թողնում ժողովրդի վրա: Երբեք նոյնպէս վատ անցան: Գառն խաղին, կասենք հետեւեալը, պ. Պետրոսեանը Արշակի դերը բաւական լաւ կատարեց. բայց նա, մեր կարծիքով, նոյն դերը անցեալներում աւելի լաւ է խաղացել: Լաւ էին նոյնպէս պ. Օհանեան և Յարութիւնեան, մասնաւոր վերջինը Արշակեանի դերում: Աւաղանը, որ արժանաւորում է ժողովրդի զգուշանքին և անտեղծանքը, այդ երկուսից արժանացաւ բոլորն ծախահարութիւններին:

Վոլորվելը բաւական լաւ անցաւ, բոլոր դերակատարները բարեխղճութեամբ էին վերաբերվել իրանց դերերին: Մասնաւոր լաւ էին տիկին Մեղիկեան և պ. Մամիկոնեան: Ներկայացման վերջում դերասանական խումբը վարձատրվեց ծախահարութիւններով:

Ա. Մ.

ՆԱՄԱԿ ԵՒ ՊԱՏՈՒՅԻՑ

Ինչպէս շատ տեղերում՝ այնպէս և մեզանում, Բարձրագոյն հրամանի համաձայն, Տարիներին հանձնագրատի կարգադրութեամբ, հայ փաստաբան Նիկողայ Մուրադեանը յօդուտ գաղթականների հանգանակեց 520 բ.: Մինչև այսօր այդ մասին ոչ մի լրագրում և ոչ մի խօսք չգրված չէ: Ամենամեծ գումարը նուիրեց այդ Ն. Սեֆերեան, այն է 200 ռուբլի:

Ծառերը այն կարծիքն են, թէ Եւրասիայի աղբարնակութիւնը, որ կազմված է հետեւեալ աղբերից՝ ուսանելից, քարայրիներից, հրէաներից, յոյներից (թաթարները մի կողմ թողնելով) և առնուազը համարում է 10,000-ի, նուիրելով մի այդպիսի մարդասէր գործի 500 ռուբլի, շատ մեծ գործ է կատարել: Միայն մի քանի քարայրիներ կարող էին այդ նշան գումարը տալ: Այս էլ չը պէտք է մոռանանք, որ գումարի համարեա չորրորդ մասը հայ հասարակութեան գրգռանք է դուրս եկել, այն էլ 15—20 հոգուց: Այստեղ ընդամենը 35 ընտանիք են: Իսկ եթէ համեմատենք մեր հարկւնները ունեցող հարուստների տուած 10-ական ռուբլիները, Նոր-Նախի-Ջևանի կամ Արմֆերօպոլի հարկւր հաղարները ունեցողների տուած հարկւր կամ տասն ռուբլիների հետ, կարող ենք պարզ ասել, որ էլի աղքատը կօգնէ աղքատին:

Ձ. Ս.

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՈՒԽՅ

Փետրվարի 10-ին

Ժանտախտի պատճառով երեք օր առաջ, մեր գաւառապետը հրաւիրել էր քաղաքի ձայնաւորներին՝ խորհրդակցելու և հոգս տանելու քաղաքի մաքրութեան մասին: Ժողովում որոշվեց այդ նպատակով ծախսել 2,000 բ.: Որոշված է վարձել 12 ֆուրգոն, քաղաքը 4 մասի բաժանել, ամեն մի մասին 3 ֆուրգոն յատկացնել կեղտոտութիւնները դուրս տանելու համար, շարունակ մաքրել քաղաքը և փողոցները, չինել հասարակաց արտաքնոցներ: Սրանից 5 տարի առաջ, երբ մեր քաղաքում խօշոր էր, քաղաքը վարձած ունէր 18 ֆուրգոն, որոնց պարտքն էր մաքրել քաղաքը: Սակայն երբ անցաւ խորհրդան, մաքրութեան խնդիրը մոռացվեց: Ամեն մի խելացի և պարտաճանաչ քաղաքացի պարտական է իր և հասարակաց առողջութեան մասին մտածելու, բայց մեր քաղաքացիների համար մաքրութիւն ասած բանը չապրովի է: Այդ պատճառով շատ ուրախալի է, որ գէթ այժմ մեր փողոցները կը մաքրվեն:

Հայոց Կարեւորական ընկերութեան վարչութիւնը ստացաւ Աստրախանից երկու հակ հագուստ, յօդուտ թիւրքահայաստանցի գաղթականների: Զօրքի գումարը նոյնպէս որոշել է բաւականաչափ մոնոլիթներ տալ մեր գաղթականներին: Նրանի թէ այդ նուիրատուութիւնը լինել ձեռն վայր սկիզբներին. բայց լաւ է ոչ քան երբեք:

Երեւանից

ՆԱՄԱԿ ԱՍԽԱԲԱԼԱՐԻՅ

Փետրվարի 6-ին

Յունվարի 25-ին, Յովհաննէսեան եղբայրների տանը, յօդուտ գաղթականների կայացում մի երեկոյթ, որի բացառիկ նպատակը գրաւել էր հանդիսականների բաւականաչափ բազմութիւնը: Ներկայից երգում էր երկու սեռի սիրողների խումբը, որ բաղկացած էր Կարա-Մուրադայի, 1892 թվին, մի ամառ ընկալեցում պատրաստած խմբի բեկորներից: Համակրելի երաժշտական, դրժիլը, ընդամենը մի ամիս մնալով մեզ մօտ, ահագին հետք թողեց, և ահա մօտ 5 տարի է, որ նրա սովորողները եղանակները երգում են բաւական, թէ և անասուն տիրացու-երաժիշտների իմպրովիզացիաները քիչ չեն խանդավառ: Այս անգամ խումբը ընդհանրապէս թող էր երգում, աւելի ևս թող էին solo-ները. գեղեցիկ երգող ուսուցչուհիների բացակայութիւնը խիստ զգալի էր: Մի քանի էլ ժողովրդական երգեր երգվեցին միաձայն:

Ի դէպ, ցանկալի է և պէտք է մեր ժողովրդական-բանաստեղծական երգերը տարածել իրանց ամբողջ հարազատութեամբ և ոչ թէ ենթակից անշուք և անբնական վարիացիաների կարծում ենք, որ նոյն իսկ շատ սովորական ճաշակ ունեցողի վրա վատ կազդէ, օրինակ, այսպիսի անողորմ աղճատումը. «Այթիւն է ատլ և տ, անթիւն է ատլ և տ, քաղցրուն կառնեմ, միշտ կուտէ կատիւն», կամ «Այթիւն է իլէյ, անթիւն է իլէյ, քաղցրուն կառնեմ, միշտ կուտէ թիլէյ», և այսպէս անվերջ մի գաղափար, որ երգվում էր երեկոյթին: Մեր գեղեցիկ երգերի հեղինակ ժողովուրդը անընդունակ է այսպիսի յիմարութիւններ յօրինելու. ինչ կը նշանակէ, որ, առէլ է կամ իլէյ, մեր գիւղացին թրտելից չէր լսէ:

Թէ ինչ է կատարել կամ փելը: Փչացած ձաշակը միայն ընդունակ է այսպիսի աղաւաղումներ:

Երգերի ընդմիջումներին դաշնամուրի վրա գեղեցիկ նուագում էր գնդապետ Առաքելովի ամուսինը: Գա Ախալքալաքում մի սիրելիղ էր. բայց ցաւելով պէտք է ասել, որ մեծամասնութիւնը չէր հետաքրքրվում դաշնամուրով, նուագելու ժամանակ խօսում էր և աւելի սաղանդարներով էր հետաքրքրվում: Երգերի և երաժշտական բաժնի որոշ ծրագիր նշանակալը պատճառ եղաւ մի անախորժ ինքնուրուի, որ մի քանի պարոնների ասիական բարբերի նմուշ կարելի է համարել: Բացի երգերից և նուագածութիւնից՝ հինգ հոգի՝ որոնցից երեքը կանայք, կարգացին վեց գրականական հասուածներ: Մասնաւորապէս կանանց կարդացածները լաւ տպագրութիւն արին, աւելի տ. Սաթ. Բարեկեանի գեղեցիկ կարդացած «Թաւանած դիւղ»:

Աւելի աջող էր երեկոյթի մօտքը. երկու գեղեցիկ քիտիներ էին չինված, որտեղ տիկինները վաճառում էին թէյ, քաղցրաւիք և պղպաղակ: Երեկոյթի բացառիկ նպատակը աչքի առաջ ունենալով, հասարակութիւնը ոչինչ չէր խնայում: Երեկոյթի մօտքն ու երբեք դեռ վերջնականապէս որոշված չէր. դուռ արդեւ հաւանական է, որ մնայ 350 բ., որ փողբիկ Ախալքալաքի համար շատ աջող կարելի է համարել: Ծնորակալութեան արժանի են երեկոյթին մասնակցող և նպաստող բոլոր տիկիններն ու պարոնները, որոնք ոչ մի ջանք չը խնայեցին գործի աջողութեան համար: Յանկալի է, որ յարգելի տիկինները չը բաւականաչափ սրանով, այլ ձեռնարկէին չորեր հաւաքել գաղթականների համար, որ մեր քաղաքում մինչև այժմ դեռ տեղի չէ ունեցել:

Ձ. Տ.—Գ.

ՆԱՄԱԿ ԽՈՒՄԴԱՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 15-ին

Նրախաղաղութեան զգացումը մեզ մղում է կատարել մի պարտականութիւն և յայտնել հրապարակաւ, «Մշակի» միջոցաւ, մեր անկեղծ շնորհակալութիւնը քաղաքային բուժարանի կառավարիչ բժիշկ Ստեփանեանցին, և իր ընկերներին: Նրե հեռացած մեր հարկերից, ապատանք էինք այս ընդարձակ քաղաքում և երբ ճանապարհի դժուարութիւններից և դանաղան պատճառներից առաջացած հիւանդութիւնները ծանրանում էին մեզ վրա—այսպիսի դատն համագործակցութեամբ մեզ համար արդարեւ մի անեծ միջոցաւ լինելու եղաւ բժիշկ Ստեփանեանցը, որ չը մերժեց գաղթականներից և ոչ մէկին, և շարունակ կամ ինքը անձամբ կամ իր օգնականներով այցելում էր մեզ, ճիշտ բժշկում, ճիշտ դեր կարգադրում, մեղանից անկարողների չը նորսփում էր և դրամական օգնութիւնը Արդարեւ առանց բժշկի, առանց դեղի, անտէր թողնում մի երկրից այստեղ գալ և վայելելով բժշկական խնամքները ազատվել այնպիսի հիւանդութիւններից, որոնք մեզ մօտ՝ Վանի կողմերում, անբուժելի համարված էին, այս ամենը այնպիսի երախտագիտական գոհունակութեամբ լցնում են մեր սիրտ, որ չենք կարող հրապարակով չարտայայտել: Այլ, եթէ լինէին այդպիսի բժիշկներ, գոնէ մի քանի հատ մեր զբաղող հայրենիքում, արդէն փրկվել էին 6000 մարդու կեանքերը, որոնք անխնայ զոհ գնացին մահվան և դեռ գնում են, առանց բժշկի և առանց հոգածութեան մնալով:

Վանից Գաղթականներ

(51 ստորագրութիւն)

ՆԱԽԻՆ ԼՈՒԹԵՐ

«Մշակի» այս համարը բաղկացած է 6 երեսից:

Մեր քաղաքի 72 ձայնաւորներից, ինչպէս լրատւ ենք, միմիայն 16 հոգի են համաձայնութիւն տուել անխաղաղական հոգաբարձուներ լինել: Նրե հարկաւոր է դուռնալով դատարկ ձառեր ասել մաքրութեան մասին, բոլոր ձայնաւորներն էլ մի-մի հետեւորներ են դառնում, բայց երբ հարկաւոր է գործ ու պէտք անել, ձայնաւորները, ինչպէս ժողովուրդն է ա-

սում, «ծախ» են մտնում: Արախի քաղաքացիական քաղաքացիական...

Գաղթականներն օգնող թիֆլիսի մասնաժողովը մի օգտակար կարգադրություն է արել... վարձել է մի գրասենյակ, ուր պէտք է դիմեն բոլոր գաղթականները յայտնելու իրանց կարօտությունները և ստանալու օգնություն: Գրասենյակը գտնվում է Արաք-Արաքսկայա հրապարակի վրա, Արեւիկայի տանը: Խորհուրդ ենք տալիս մեր քաղաքում գտնվող հայ գաղթականներին դիմել այդ գրասենյակը:

Այսօր «Մշակի» մէջ տպագրվող պաշտօնական հաշիւը երևում է, որ կովկասեան կառավարչապետի դիւանից յօդուտ գաղթականներին հաւաքված փողերից մաս է հանված նոյնպէս կարօտ և իրենցին մէջ գտնվող գաղթականների համար: Մենք սպասում ենք, որ այդ նահանգներին գլխաւոր կէտերուն, իրենանում, կարսում, կաղզվանում, իզդիրում, վաղարշապատում հիմնվեն մասնա ժողովներ, նպաստները բաժանելու համար:

Մեր թղթակիցը Շուշուի հաղորդում է մեզ գովասանքի արժանի հետեւեալ լուրը: Վստում ենք, որ մասկիւքանի ելը. Ժամհարեանցները առաջարկել են քաղաքային դումային՝ բանալ Շուշում մի հիւանդանոց, որի համար նուիրում են հարկեր հաղար բուրլի:

Մեզ հաղորդում են, որ Բագուի Մարդասիրական ընկերությունը կարօտ գործերին օգնելու համար յատկացրել է ոչ թէ 2800 ռուբլի, ինչպէս հաղորդել են մի քանի լրագրողներ, այլ պէս միայն... 800 ռուբլի: Այդպիսի մի չնչին գումար, խոսովանում ենք, բոլորովին չէ համապատասխանում մեր մի քանի ամեծապատիւ մուրացիներին: զորքված անորոշակիւն, եթէ նոյն իսկ չը հաշուենք մեր այն գործերին, որոնք միւրաքանչեւ օգնութեան կարօտ են:

Մեր վիճ մեզ գրում են. «Մեզ մօտ, դեռ մինչև այժմ հայ գաղթականների օգտին ոչ մի հանգանակություն չէ եղել: Ձը գիտե՞ք ինչո՞վ բացատրել այդ անտարբերութիւնը դէպի մեր կարօտ հայրենակիցները. նորերս միայն մի խումբ երիտասարդների մէջ միտք է յղացել մի ներկայացում տալու յօդուտ գաղթականներին: ցանկանում ենք բարի գործին կատարեալ աջակցութիւն»:

ՆՈՐ-ԲԱՅԱՋԻՏԻՑ մեզ գրում են փետրվարի 15-ից. «Երէկ, երկու նախապատրաստական նիստերից յետոյ, քաղաքային առաջ ընտրվեց ցարութիւն Մամիկոնեանց, իսկ օգնական՝ Գեորգ Արծրունին»:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ահա մի քանի օր է ինչ քաղաքում նկատվում է մի նոր անսպասելի հոսանք—դա բանաւոր մարդկանց հոսանք է, որ սկսված է Բագուից դէպի հայրենի Ջանդուղ գետափ գիւղերը: Հարկւրաւոր մշակներ ամեն հասակի, գունաթափված, նիհար, սեպած, հիւանդ, ցնցոտիներ մէջ փախչում են հայրենիք, ժամտախի երկիւղից: Ինչպէս երևում է, այդ անհիմն երկիւղը մեծ դժբաղդութեան մէջ պէտք է գցի մեր մշակների առաջին դասակարգը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Երբնկայից ստացված մի նամակ ահա թէ ինչ է հաղորդում. «Էլը լսենք որ մօտիկ օրեր կեսաբիոյ մէջ կրկին նոր ջարդ մը եղած է. ստոյգ տեղեկութիւններ կը պակսին մեզ, սակայն մեզ հասած լուրերուն նայելով շատ մը տանանակ հայեր սպաննած են, նրանց գոչքը աւարի առնուած ու աներնին վառուած, մոխիր դարձած»:

Փողով և չորով հայերին օգնելու հրաւերները չարունակվում են Անգլիայում. մի թուրքիկ թերթ, որ կրում է «How to help» (Ինչպէս օգնել) անունը, հրաւեր է կարդում տարածել անդադար տեղեկութիւններ հայերի և նրանց վիճակի մասին, ժողովել փող ու չոր և ուղարկել փոքր-Ասիա: Հայերի մասին անգլիացիներին ըն-

դարձակ կերպով տեղեկութիւններ տալու համար, թերթիկը առաջարկում է կազմակերպել դասախօսութիւններ մոզական լսարաններով, հրատարակել լրագիրներ մէջ ընթացիկ լուրեր, հրաւիրելով ժողովներ կազմել և խորհրդակցել ներկայ թշուառ վիճակը թեթեւացնելու նպատակով: Փող և չոր ուղարկելու համար պէտք է ժողովարարութիւններ անել, թէ տնէտուն մանգաղով, թէ լրագիրներ օգնութեան դիմելով, թէ դասախօսութիւնների, կոնցերտների և այլ ձեռնարկութիւնների դիմելով: Հարեւր ուղարկելու միջոցին, ասում է թերթիկը, պէտք է զգուշանալ որ և է թղթի կտոր նրանց մէջ թողնելու, որովհետեւ այդ հանգամանքը կասկածներ կը յարուցանի և օգտաւէտ գործը կը վնասվի: Գերադասելի են տաք շորեր, ֆլանելից, բրդից պատրաստված ձեւակերպներ: Մի խումբ նշանաւոր անձեր համաձայնութիւն են յայտնել ընդունել նուիրատուութիւններ Գրանց մէջն են տիկին Սոմերսետ, Բէքեր, Մարշալ, օրիորդ Գարլինգ, Արտուր Ուեբ և ուրիշներ:

Բերլինից հեռագրում են, որ Անգլիայի և Գերմանիայի մէջ եղած տարաձայնութիւնները հայոց և կրեական հարցի առիթով հարկված են Աստորիայի միջնորդութեան շնորհիւ: Գերմանիան համաձայնութիւն է տուել այն առաջարկութիւններին, որոնք ձեռակերպել են կոմս Մուրվիլէյ և Գլուխովսկի և այժմ Անգլիան միացել է նրանց հետ վերջնականապէս:

Թէ ինչ ահազին տպագրութիւն է թողել Կրեական ակադեմիայից Բաղկասկան թերթիկը: Բանալիներ լրա, այդ երևում է վարչապետը հրատարակող «Ստորնա» թերթի հետեւեալ յօդուածից. «Յուզիչ, բայց ուրախ լուրեր բերեց մեզ այս օրերս հեռագրերը: Յունիսի 8-ից Կրեական դարձել է պատերազմական գործողութիւնների տեսարան, որտեղ անխորտակ կուռն են կանոնաւոր գործերը հասարակ, անպաշտպան քաղաքայինների հետ, բայց իր սատարային հետ, մուսուլմանները քրիստոնեաների հետ: Կրեական վերջնականապէս ոտքի է կանգնել: Կրեականները կուռն են,—կամ մահ կամ աղատութիւն: Նրանք դիմել են վերջին, ամենաշանդուղն և եւրոպական միջոցին՝ թերթաց լուծը թօթափելու համար: Մենք ողջունում ենք առաջինի կրեականայիններին՝ իրանց ընտրած յարմար վայրկեանի համար, որովհետեւ ենք և յոյներին, որոնք օգնութեան են հասել ստորմիներին դէպքը ձեռքին: Մենք յայտնում ենք մեր ամենամեծ համակրութիւնը կրեական շարժման և սրտագին աջակցութիւն ենք ցանկանում նրան: Նա աջողութիւն կունենայ, որովհետեւ նրա կողմն է ճշմարտութիւնը և արդարութիւնը: Բայց ինչ գեղեցիկ օրինակ է մեզ համար: Ինչ հիանալի օրինակ է բոլորների և մակեդոնացիների համար, բոլորական կառավարութեան և ինտելիգենցիայի համար: Ինչ լաւ հրաւեր է մեզ բոլորիս համար, որպէս զի մենք ամենքս պատրաստվենք սրբազան կուռնի կողմի բռնապետութեան, թիրաքաց կառավարութեան դէմ»:

Կ. Պոլսի լրագիրներում կարդում ենք. «Տասն երկու (?) գաւառներ պատրիարքարան զրկած են որբերու պաշտօնական ցուցակները: Այդ գաւառներն են՝ Ուրֆա, Արաբկիր, Հիւսնի-Մանսուր, Զնուշ, Ակն, Ամասիա, Բաբերդ, Կեսարիա, Միս, Պայաղիտ, Խարբերդ և Մալաթիա:

«Արդարութեան գործոց նախարարութեան կողմանէ Պատրիարքարան հաղորդուած պաշտօնագրեր կը ծանուցանեն թէ 2000 ղրչ. հանգստեան թոշակ յատկացուած է նախորդ Ս. Պատրիարք Հօր (որը սակայն չէ վճարվում):

«Եղեւիոյ կառավարութիւնը ծանուցել է թէ 3000 Հայ կարօտեալներ կը գտնուին հոն: Ասոնց սկսած են բաշխուիլ Զուլիգերիոյ մարդասերներէն զրկուած հանդերձեղներէն:

«Անգլուհի մը, Ալվանսարի ջաղացքը բանեցնող գործարանատիրոջ կինը, Տիկին Հէյլուս, ամէն շաբթու 25 ոսկու չափ նպաստ մը կը բաշխէ Սալմաթիօրուքի 70 չափ ընտանիքներու, որք ծայրագոյն աղքատութեամբ կը տառապին: Բարեսիրտ Տիկինը կը գործակցի Պաշտօն Միջոցէլ քահանային:

«Պայաղիտի մէջ գտնուող օգնութեան ու պաշտպանութեան կարօտ աղքատ տղայոց թիւը կը հասնի 300-ի: (Ինչո՞ւ ոչ 3,000):

Անգլիական «Daily News» իր մի առաջնորդողում այն միտքն է յայտնում, թէ հայերի և թիրաքիայի միւս քրիստոնեաների չահերի տեսակէտից ցանկալի չէ Կրեական միացնելը: Յունաստանի հետ, որովհետեւ այդպիսով ընդհանուր բեֆօրիսների և բարեկարգութեան խնդիրը կը յետաձգվէր. մինչդեռ Կրեական միայն մի մասն է ամբողջ թիրաքիայի վերանորոգութեան մեծ ծրագիրը:

Եւրօպայում, որտեղ առհասարակ հասարակական կարծիքը տրամադրված է յօդուտ յոյների, ահազին ցնցում գործեց այն լուրը, թէ քրիստոնեայ մեծ պետութիւնների միացեալ նաւատորմը սկսել է ուղևորվել յոյների բանակը: Հնօ միջ հեռագրում են, որ այդ լուրը զանազան չբաններում աստիկ տպաւորութիւն գործեց, երկիւղ են կրում, որ կառավարութեան դէմ ցոյցեր տեղի կունենան, որովհետեւ հասարակական կարծիքը հակառակ է Յունաստանի դէմ բռնի միջոցներ ձեռք առնելուն: «Daily Chronicle» նկատում է այդ առիթով, որ եւրօպական ծովագետները արդէն յոյներին կուս բռնվել թիրաքերի հետ, մատերի արանքով են նաւատ թիրաքերին, երբ սրանք յարձակվում են յոյներին վրա: Աթէնքի լրագիրները կսկիծով յայտնում են, որ անմեղ հայերի երկու օրվայ կոտորածի ժամանակ, Կ. Պոլսում, եւրօպական պատերազմական պահակաւորներ անկարելից հանդիսատեսներ էին մնում միայն...:

«Յունաց թագաւոր Գեորգը յայտնեց, որ եթէ պետութիւնները կը հեռացնեն յունական զօրքը Կրեական, նա կը հրաժարվի իր զահից: Թագաւորը բացատրեց մեծ պետութիւնների դեպքաներից մէկին, որ ինքը մի քանի անգամ հրաւիրեց պետութիւնների ուղադրութիւնը Կրեական վրա, բայց ևս ետեւեղը միայն իրան ժանդարմէրա կազմելն եղաւ: Համաբերութեան հատու, ասաց Գեորգ թագաւորը, ես վճեցել միացնել Կրեական, որ հոգով և մարմնով պատկանում է Յունաստանին: Գուցէ այդ վիճու առաջ բերի ինձ դէմ բռնի միջոցներ, բայց ամբողջ հսկանական ազդը իմ կողմն է: Ես հրամայել եմ մտնել Կրեական նոր վարչութիւն»:

ԱՆԳԼԻԱՅԻ ՊԵՏԱՍԽԱՆԱՍԻՈՒԹԻՒՆԸ

Նորերս, Լօնդոնում, «Հայերի բարեկամների միջազգային ընկերութեան» ձեռքով հրատարակած թերթերից մէկը, որ կրում է «Englands Responsibility» («Անգլիայի պատասխանատուութիւնը») վերնագիրը, առաջ է բերում չորս զլխաւոր մօտեւնաւոր, որոնցով որչա՞նչ է Անգլիայի բռնած դիրքը հայերի վերաբերմամբ: մենք վերջին քսան տարվայ ընթացքում: Առաջին մօտեւոր վերաբերում է այն անցքերին, որ տեղի ունեցան Սան Ստեֆանոյի դաշնագրի կապիւրեց առաջ. երկրորդը հենց ինքը Սան-Ստեֆանոյի դաշնագիրը է. երրորդը Բերլինի դաշնագիրը և չորրորդը Կիսրոսի դաշնագիրը: Անգլիան այդ դաշնագիրները կապելու ժամանակ աշխատեց ամեն կերպ զիտօղել Ռուսաստանին և չքայնել սրա յաղթական արշաւանքի նշանակութիւնը: Սակայն ինչ չափեց,—միայն բացասական հետեւանքներ: Գուրգ Արքայի խօսելով Սան-Ստեֆանոյի դաշնագրի ոչնչացնելու մասին, բացառապէս է լինել արքին մենք անգլիացի մեր ժանիքները. մենք յատկացրինք զինման համար 6 միլիոն ֆունտ ստերլինգ և արտակարգ պատուէր արձակեցինք հնդկական զօրքեր բերելու մասին: Եւ, յիշաւի, անգլիական նաւերը երեսցին Գաղղաներում և խորիսի գցեցին Իշխանների կղզիների մօտ: Մենք ոչնչացրինք Սան-Ստեֆանոյի դաշնագիրը, աւարկելով, որ նա հակառակ է Պարթիզ դաշնագրին, որով քրիստոնեաների ասպնովութեան հոգը ծանրանում է ամբողջ Եւրօպայի վրա և ոչ բացառապէս միայն Ռուսաստանի վրա: Լօրէ Սօլսբերի 1878 թ.ին պարծենում էր, որ անգլիական քաղաքականութիւնը մեծ յաղթութիւն տարաւ. նա հանգստացնում էր անգլիական ժողովրդին ասելով, որ Անգլիան խոստումներ է ատել թիրաքիայից բըրիստոնեաների վիճակը բարեւերութեան վերաբերութեամբ: Սակայն երբ հարկաւոր էր, որ Անգլիան իրապէս ապացուցանէր իր իրաւունքները և պահանջեր թիրաքիայից կատարել իր խոստումները, ոչինչ չը կարողացաւ անել և թող տուեց:

Անգլիան հանգուցեալ խաչատուր կաթողիկոս մեռած ժամանակ կտակում էր գումար 1200 օսմ. ոսկի կտրել գումար մը Աթլմարի մէջ թեմական դպրոց մը բանալու համար: Նախորդ պատրիարք Մատթէոս սրբազան իրմբերան՝ նըկատելով պարագաների անյարմարութիւնը, հրաւայած էր Սահակ վարդապետին այդ գումարը կը մնար վանի առաջնորդարանի մեղուկը, անհեռաթելի մնայ մինչև հանգամանքների բարեփոխուիլը, գործածելու համար մի միայն սահմանեալ նպատակին, որի կարեւորութիւնը անուրանալի է, ի նկատի ունենալով որ ամբողջ Անգլիայում, Շատախ, Խիզան, Մոկս և այլն և այլն) մէջ չի գտնուի և ոչ մի տարրական նախալըրթարան մը: Արսէն վարդապետ որ դեռ վանի առաջնորդական փոխանորդ չեղած ամէն ջանք գործ կը դնէր այդ գումարէն մաս մը վանքի կարեւոր ծախքերին, գործածելու առարկութեամբ ձեռք ձգել, Սահակ վարդապետի հեռացումով և իդմիրեան սրբազանի հրաժարմամբ, պատրիարքարանի անկարողարան վիճակից քաջակրկնած, այլ ևս քաջանքներ ասպարէզ գտած այդ գումարը իր բմաց համաձայն մխելու, ինչ որ դեռ կը չա-

որ իր աչքի առաջ տեղի ունենան 1894—96 թ.ին հայկական կոտորածները, որոնք տեղի չէին ունենայ, եթէ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը ոչնչացրված չը լինէր: Ինչը կարող է աւելի մեծ ծաղր լինել Անգլիայի համար, քան այն, որ 1895 թ.ին Ռուստեմ փաշան զարմանք յայտնեց, թէ ինչ հիման վրա է Անգլիան խոսնվում թիրաքիայի ներքին գործերի մէջ: Եւ Կիմբերլէյ օտարված եղաւ յիշեցնել, որ Բերլինի և Կիսրոսի դաշնագիրներով Անգլիան իրաւունք ունի հայերի վերաբերութեամբ պահանջներ անել, կցելով որ և միւս եւրօպական պետութիւններն էլ ունեն իրանց վրա վերցրած պարտաւորութիւններ, և որ նրանք չեն կարող անտարբեր մնալ և կարող են միջամտել թիրաքիայի գործերի մէջ հայերին պաշտպանելու նպատակով:

ՎԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈՒԱՆՈՐԴ

Վ. ան, յունիսի 2-ին

Վերջին մի քանի ամիսների ընթացքի մէջ մեր ազգային առաջնորդարանի հեղինակութիւն բոլորովին չքայած է: Ձը նայած այնքան կարեւորների, ոչ ոք կը դիմէ հոն: Առաջնորդի առժամեայ փոխանորդ Արսէն վարդապետ իր այդ փափակ և վերին աստիճանի հեռատեսութիւն պահանջող պաշտօնի արժանապէս վարելու անընդունակ է: Արսէն վարդապետ անց պաշտօնի ստանձնելուց առաջ՝ մօտ մի տարի է, որ Աթլմարի խաչատուր կաթողիկոսի հանդերձանից սկսեալ՝ կարգուած էր նաև՝ նոյն կաթողիկոսի փափաղին համաձայն՝ Աթլմարի կաթողիկոսական տեղապահ: Ինչպէս կերել, յաջորդապէս այս կերպ երկու ամենակարեւոր պաշտօնների իրեն վստահեցուիլը՝ չափազանց մեծ զաղախութեւն հնարեցանք է Արսէն վարդապետին իր իսկ անձին նկատմամբ, որ իր պաշտօններին ծանրութիւններ կը կրելուց աւելի՝ անուր անուններն չլայցած լինել կը թուէ: Այդ վարդապետ չունի վարչական անհրաժեշտ մեծ հմտութիւն մը, որուն ուղեքը ներկայ հանգամանքների մէջ այնքան զգալի է: Վանի պէս կարեւոր թեմի մը առաջնորդական պաշտօն իրեն վստահեցուիլը աւելի դէպքերի հետեւեղ եղաւ, քան կանխորոշանքների կոտորածէն ետք որպէս զի հայերի վերջին յոյն ու ապաւանի ալ վերցուի, կայսերական քննիչ Ֆերիք Ալեանդրանի փաշայի յաջողեցաւ մեր նախորդ պատրիարքական փոխանորդ Սահակ վարդապետին եւս վանից հեռացնելու հրաման ձեռք բերել: Անոր միակ արժանի յաջորդ և խորհրդական՝ վարագի վստաց փոխ-վանահայր Գանիէլ արժանաշխատակ վարդապետ՝ դէպքի առաջին օրն իսկ սպանուած ըլլալով, ոչ ոք կը մնար բացի Արսէնից, որին պարտաւորեցան յանձնել, թէ և ակամայ, Սահակ վարդապետը իր թեմին փոխանորդութիւն: Արսէն վարդապետ իր պաշտօնավարութեան առաջին օրերին իսկ խաղալը դարձաւ՝ դեռ այն ատեններ՝ Վան գտնուող Ալեանդրանի և քանի մը վստահողի ազգայինների ձեռք և իր կարգ մը ստրկական, անվայելուչ և ժողովուրդին զղուանք ազդող արարքներով՝ իր անկալած աննշան համակրութիւնն եւ կորսնցուց:

